ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

13-07-2020թ.
Նախընտրած ծանուցման ձևը
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*
Դիմող՝ *ՆԱՐԵ ՂԱՓԱՆՑՅԱՆ*
ՀՀ քաղաքացի
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0078, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., 51, 35,*
nare191@gmail.com : +37443993417

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի Պարոն Ա. Ղուկասյան,

Շարունակելով մեր խոսակցությունը, որը ունեցանք 05/06/2020թ.-ին տեղի ունեցած հանդիպմանը, խնդրում ենք աջակցել մեզ հետաքրքրող տարածքի մասին տեղեկությունների հավաքագրման հարցում։

Ինչպես նշել էինք, մենք պլանավորում ենք ծավալել տուրիստական/հյուրընկալական գործունեություն Լոռու մարզում։ Փնտրում ենք տարածք, որը կհամապատասխանի որոշակի չափանիշների։ Այցելել ենք մի շարք քաղաքներ և գյուղեր։ Այս պահի դրությամբ առանձնացրել ենք մի քանի տարբերակ՝ մասնավորապես Կուրթան գյուղը, որտեղ մեզ ցույց են տվել մի քանի տարածք։

Տարածքի կոորդինատները են՝ 40°57'21.9"N 44°34'19.7"E։

Խնդրում ենք աջակցել հետևյալ տվյալների տրամադրման մեջ՝
1. Նշված կոորդինատներին համապատասխան հողի կարգավիճակը - համայնքային է այն, սեփականաշնորհված, թե հանդիսանում է հատուկ պահպանվող տարածք
2. Եթե հողը ունի հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ
a. Ինչպես է հնարավոր օգտագործել այդ հողը և ինչ պարտադիր պայմաններ կան
b. Որոնք են հատուկ պահպանվող հողի կարգավիճակ ունեցող տարածքի ձեռքբերման և/կամ օգտագործման պայմանները
c. Որքան է նշված կոորդինատներին համապատասխան հատուկ պահպանվող հողի կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար
3. Նշված կոորդինատներին համապատասխան տարածքի քարտեզագրումը, որտեղ կերևա, որն է հանդիսանում համայնքային հող, որը՝ սեփական և որը՝ հատուկ պահպանվող
4. Նշված կոորդինատներին համապատասխան համայնքային հող հանդիսացող տարածքի մակերեսը՝ քառակուսի մետրերով
5. Նշված կոորդինատներին համապատասխան համայնքային հողի կադաստրային արժեքը մեկ քառակուսի մետրի համար

Կանխավ շնորհակալություն աջակցության համար։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Դիմող՝

ՆԱՐԵ ՂԱՓԱՆՑՅԱՆ